ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86»

ք. Տաշիր **«17» հուլիսի 2019 թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է **«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան»**-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմար Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, որը գործում է «Արմար Գրուպ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Տաշիր համայնքի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 31 օգոստոսի 2019թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6762000 (վեց միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ, որից 1127000 (մեկ միլիոն հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան	**«Արմար Գրուպ» ՍՊԸ**
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94	**Հասցե** Ք. Վանաձոր, Տերյան 6-23
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	**Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ**
Հ/Հ 900272101024	**ՀՀ 2471707969620000**
ՀՎՀՀ 06954139	**ՀՎՀՀ 06954997**
----------Է. Արշակյան	**----------Ա. Մարտիրոսյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ.	**Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« » հուլիսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86»
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*[35]

«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎԸ

Ծավալաթերթ N1 /Լոտ 1/ Շինարարական աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
	<u>ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ</u>			0,00	0,00
1	Հատակների առկա վերին հարդարարական շերտերի քանդում մինչև առաջին ց/ա հարթեցնող շերտ, փայտե մանրահատակ, ներկված ՓՄԹ, լինոլիում, ներառյալ շրիշակները	$մ^2$	46,6	0,52	24,12
2	760x2000մմ չափերի փայտե դռան ապամոնտաժում /1 հատ/	$մ^2$	1,52	1,12	1,70
3	710x2000մմ չափերի փայտե դռան ապամոնտաժում /1 հատ/	$մ^2$	1,42	1,12	1,59
4	710x2000մմ չափերի ճաղավանդակով մետաղական դռան ապամոնտաժում /1 հատ/	$մ^2$	1,42	2,78	3,95
5	900x2200մմ չափերի փայտե դռների ապամոնտաժում /2 հատ/	$մ^2$	3,96	1,12	4,44
6	950x2200մմ չափերի փայտե դռան ապամոնտաժում /1 հատ/	$մ^2$	2,09	1,12	2,34
7	1380x1920 մմ չափերի փայտե լուսամուտի ապամոնտաժում /1 հատ/, ներառյալ լուսամուտագոգը	$մ^2$	2,65	1,91	5,06
8	1390x1920 մմ չափերի փայտե լուսամուտի ապամոնտաժում /1 հատ/, ներառյալ լուսամուտագոգը	$մ^2$	2,67	1,91	5,09
9	1420x1920 մմ չափերի փայտե լուսամուտի ապամոնտաժում /1 հատ/, ներառյալ լուսամուտագոգը	$մ^2$	2,73	1,91	5,21
10	թեթև բետոնե միջնորմների քանդում	$մ^2$	31,17	0,78	24,30
11	Բոլոր էլեկտրական վարդակների և անջատիչների և բաժանարար տուփերի ապամոնտաժում	հատ	9	0,09	0,84
12	Բոլոր լուսատուների ապամոնտաժում	հատ	3	0,27	0,82
13	Չգործող հին խողովակների ապամոնտաժում	գմ	20	0,32	6,35
14	Պատերի հարդարարական շերտերի քանդում (ներառյալ կողային շեպույթները), հիմնականում գաջ	$մ^2$	70	0,73	51,11
15	Վարագույրների ապամոնտաժում 3 հատ	գմ	4,5	0,31	1,42
16	40(L)x60(Խ) մմ չափերով ակոսի բացում	գմ	3,45	0,54	1,85
17	Բետոնե հիմնատակի քանդում, 100 մմ հաստությամբ	$մ^3$	0,3	15,16	4,55
18	Շին. աղբի հավաքու, բարձում եւ տեղափոխում 3կմ	տ	12,8	1,39	17,85

[35] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

	ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ			0,00	0,00
1	Բացվածքների փակում՝ տուֆե կանոնավոր շարվածքով: Երեք բացվածքի համար	$մ^3$	2,5	17,78	44,46
2	Միակողմանի ԳԿԹ պատի կառուցում (T=12 մմ, ստադի չափը՝ 50 մմ)	$մ^2$	40	4,35	174,05
3	Ջերմամեկուսիչ հանքային բամբակ (T=50 մմ)	$մ^2$	34	0,57	19,33
4	Մոնտաժային ջերմամեկուսիչ փրփուռ	$մ^3$	0,1	1678,48	167,85
5	Արտամղված փրփրապոլիստերոլ, T=30 մմ	$մ^2$	6	1,12	6,74
	ԱՌԱՍՏԱՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ			0,00	0,00
1	ԳԿԹ ակուստիկ պանելներ, T=12.5 մմ, արտադրողը՝ Knauf (կամ տեխնիկապես համարժեք), D=8 և D=12 մմ անցերով տեսակը	$մ^2$	50	8,54	426,81
	ԼՈՒՍԱՄՈՒՏԱԳՈԳԵՐ			0,00	0,00
1	Լուսամուտագոգերի հարթեցման շերտի պատրաստում ցեմենտ-ավազե սվաղով, 10 մմ հաստությամբ	$մ^2$	1,5	1,32	1,97
2	Բազալտե սալ, 1300x350 մմ չափերի, T=20 մմ, 3 հատ	$մ^2$	1,37	12,56	17,21
3	Ալյումինե անկյունակ L10 մմ	գմ	4	0,34	1,34
	ՀԱՏԱԿՆԵՐ			0,00	0,00
1	1200x600x11 մմ չափերի կերամագրանիտե բարձրորակ սալիկներով հատակի պատրաստում: Նկարվածքը՝ բետոն, մակերևույթը՝ փայլատ: Ըստ KERAMA MARAZZI SG502100R կամ համանման	$մ^2$	49,7	12,84	638,36
2	Սոսնձանյութ, T_{max}=4 մմ, ջրանթափանցելիությունը բարձրացնող հավելանյութով 46.9$մ^2$	կգ	229,7	0,13	30,33
3	Ց/ա հարթեցնող շերտ, 35 մմ, ամրանավորված	$մ^2$	46,9	1,16	54,27
4	100x100 մմ ամրանային ցանց	$մ^2$	46,9	0,56	26,45
5	Արտամղված փրփրապոլիստերոլ, T=20 մմ	$մ^2$	46,9	0,67	31,64
	ՇՐԻՇԱԿՆԵՐ			0,00	0,00
1	Ալյումինե կամ ցինկապատ հարդարարական անկյունակ, 20x20 մմ	գմ	19	0,74	14,02
2	Պատի մեջ ներկառուցված պլաստիկ սակառ 60x40 մմ, պլաստիկ կափարիչով	գմ	13	1,03	13,33
3	Պատի մեջ ներկառուցված պլաստիկ սակառ 70x20 մմ, պլաստիկ կափարիչով	գմ	7	0,97	6,79
4	Փայտե շրիշակ, չափը՝ 90x15 մմ, ներկել, գույնը՝ Lichtweiss, երեք շերտ գրունտի(օտեքս)վրայից	գմ	30	1,10	33,06
5	20x20x100մմ փայտե չորսուի ձգում՝ դյուբել հեղույսով, քայլը՝ 600 մմ	գմ	14	0,35	4,83
6	40x20x100մմ փայտե չորսուի ձգում՝ դյուբել հեղույսով, քայլը՝ 600 մմ	գմ	3	0,41	1,22
7	50x20x100մմ փայտե սոսնձում՝ քայլը՝ 600 մմ	գմ	6	0,32	1,95
	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ			0,00	0,00
1	Պատերի գիպսոնիտե սվաղ (գիպսոնիտ 70% + գիպս 30%), ներառյալ շեպույթները /Ներառյալ շեպույթները, միջանցքի հատվածի տուֆե բլոկները/	$մ^2$	64	2,04	130,26
2	Պատերի գիպսոնիտե սվաղի հղկում-հարթեցում, նոր գրունտի շերտի պատրաստում /Ներառյալ շեպույթները, միջանցքի հատվածի տուֆե բլոկները/	$մ^2$	64	0,34	21,92
3	Պատերի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, ծեփամածկումով, սպունգով լվացվող, գույնը՝ Lichtweiss: Ներառյալ շեպույթները և միջանցքի կողմից փակվող բացվածքների հատվածը	$մ^2$	124	1,17	144,56

4	Առաստաղի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, ծեփամածկումով, սպունգով լվացվող, գույնը՝ Indeco-plus Weiss /Միայն ակուստիկ պանելների արանքների երկայնքով, 10 սմ լայնությամբ: Ինչպես նաև քանդվող միջնորմների տեղերում/	$մ^2$	12	1,28	15,41
5	600x400x20 մմ չափի Հոկտեմբերյանի տուֆով սալապատում՝ սոսնձելով պատի վրա, g/a երեսասվաղի վրայից: Առանց կարերի, արտաքին մակերեսը պատի ներկված հարթության մեջ	$մ^2$	6,8	12,24	83,25
6	g/a երեսասվաղ նախորդի համար, T=25 մմ	$մ^2$	6,8	1,74	11,83
	ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ			0,00	0,00
1	Արտաքին մետաղական (թիթեղ, ներկված պոլիմերային ներկով) լուսամուտագոգերի տեղադրում	$մ^2$	1,2	4,54	5,45
2	Նույնի հերմետիզացում թափանցիկ սիլիկոնով՝ պարագծով	գմ	9	0,51	4,62
3	Արտաքին պատի ճակատային քարե շարվածքներում փոքր ճաքերի (ոչ կոնստրուկտիվ) ջրամեկուսից հերմետիզացում ճակատային ծեփամածիկով, գույնը՝ ըստ առկա քարի երանգի	$մ^2$	3	0,31	0,92
	ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ			0,00	0,00
1	3 հատ 1360(W)x2080(H) մմ չափի գալարավարագույրներ: Գույնը՝ բեժ: Կտորի նմուշը համաձայնեցնել ճարտարապետի հետ: Տեղադրվում է լուսամուտի բացվածքից դուրս, պատի ներսի մակերևույթի վրա: Մանրամասները տես նախագծում	$մ^2$	8,49	9,79	83,13
	Համակարգչային ցանցի մալուխների մուտքի/ելքի անցքի պատրաստում			0,00	0,00
1	Անցքի շաղափում Ի30մմ	հատ	1	0,37	0,37
2	Անցքի քողարկման ալյումինե դետալ, L-աձև պրոֆիլով, ներկված ակրիլիկ ներկով Ի30 մմ անցքի համար	հատ	1	1,29	1,29
3	ՊՎՔ խողովակ, Ի20 մմ	գմ	3,5	0,38	1,31
4	ՊՎՔ անկյունակ, Ի20 մմ	հատ	2	0,29	0,58
	Ընդամենը /հազ. դր./				2383,51
	Շահույթ 11%				262,19
	Ընդամենը /հազ. դր./				2645,69
	Ա.Ա.Հ.20%				529,1383
	Ընդամենը /հազ. դր./				3174,83

Ծավալաթերթ N2 /Լոտ 2/ Դուռ-լուսամուտ եւ լուսամուտներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	Հակամիջատային ցանցեր՝ մոտ 600x1905 մմ չափերի, ծխնիներով	հատ	3	11,67	35,00

2	Մոտ 1330x1965մմ չափերով լուսամուտներ (3 հատ), պրոֆիլը էներգաարդյունավետ (Ud = 0.91 W/(m²K)) ՊՎՔ, BRUGMAN AD (կամ տեխնիկապես համարժեք), մոնտաժային լայնությունը՝ 73 մմ, ֆալցը՝ ուղիղ, ձայնամեկուսացման մակարդակը՝ 35-46 դԲ, հակաառևանգման կարգը՝ 2-րդ, ջերմահաղորդականության դիմադրությունը՝ 0.79-0.85 Մ2x°C/Վտ շրջանակի գույնը՝ սպիտակ, երկշերտ ապակեփաթեթով, ապակիները՝ 5 մմ, կոփած: Բարդ փեղկով: Այլ մանրամասները տես ստորև և նախագծում	մ²	7,84	71,67	561,87
3	Այդ թվում բարդ փեղկ	հատ	3	11,67	35,00
4	2500x2920 մմ չափերով դուռ-լուսամուտ, ETEM E1000 կամ համարժեք պրոֆիլով (միայն պարագծով), առանց ջերմակամրջակի, առանց աղեղային լծորդումների, շրջանակի գույնը՝ PULVER 09620.MH328 (էլեկտրոլիզով ներկված), երկշերտ ապակեփաթեթով, ապակիները՝ 12 մմ, կոփած: Այլ մանրամասները տես ստորև և նախագծում	մ²	4,74	65,00	308,10
5	Այդ թվում աքսեսուարներ՝ դռան բռնակ, մետաղական գլանաձև ծող D=35-40 մմ, L=1000 մմ, գույնը՝ պողպատ/քրոմ, տեղադրվում է դռան երկու կողմից: Այդ թվում դռան Dorma չափաբերիչ (40 կգ-ի համար), գույնը՝ մոխրագույն, տեղադրվում է բացվող կողմից (դռան վերնամասում) , բարձրորակ դռան փական, տակառաձև լեզվակով, բանալիներով, գույնը՝ պողպատ/քրոմ, դռան սահմանափակիչ, գույնը՝ պողպատ/քրոմ, թափանցիկ ռետինե օղակով	կ-տ	1,00	175,00	175,00

Ընդամենը /հազ. դր./	1114,97
Ա.Ա.Հ. 20%	222,99
Ընդամենը /հազ. դր./	1337,97

Ծավալաթերթ N3 /Լոտ 3/ էլեկտրատեխնիկական աշխատանքներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	1 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	4	0,08	0,34
2	2 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	3	0,19	0,56
3	3 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	4	0,28	1,12
4	4 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	4	0,34	1,34
5	1 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	4	0,19	0,75
6	2 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	3	0,33	0,98
7	3 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	4	0,61	2,43
8	4 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	4	1,12	4,48
9	Էլեկտրական ներկառուցվող վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	24	1,03	24,64
10	1 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	1	2,75	2,75
11	2 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	5	5,36	26,80

12	RJ-45 + RJ-11 տիպի (համակարգչային ցանց + հեռախոս) վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	2	3,96	7,92
13	Անջատիչ երկու ստեղնով	հատ	2	1,47	2,94
14	Էլեկտրական շղթայի ավտոմատների ներկառուցվող մետաղական տուփ 24 մոդուլի համար, չափը 430x330x86 մմ, ներկված պատի գույնի	հատ	1	29,06	29,06
15	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, երկբևեռ, 100 A, C դաս: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Ընդհանուր 1,2,3,4,5 խմբերի համար	հատ	1	10,59	10,59
16	ТХЗ УЗО, 32 Ա, 220 Վ խումբ 1 համար	հատ	1	12,21	12,21
17	ТХЗ УЗО, 63 Ա, 220 Վ Ընդհանուր 2,3,4,5 խմբերի համար	հատ	1	13,51	13,51
18	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, միաբևեռ, 32 Ա, B դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության խումբ 1, ջեռուցման վարդակներ	հատ	1	6,11	6,11
19	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, միաբևեռ, 10 Ա, C դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության խումբ 2, սերվեր	հատ	1	2,98	2,98
20	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, միաբևեռ, 40 Ա, C դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության խումբ 3, այլ հոսանքի վարդակներ	հատ	1	3,44	3,44
21	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, միաբևեռ, 6 Ա, B դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության խումբ 4, Լուսատուների համար	հատ	1	3,49	3,49
22	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, միաբևեռ, 2 Ա, B դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության խումբ 5, անվտանգության համակարգ	հատ	1	3,49	3,49
23	Խրամուղու քանդում և հետլիցք հողանցման կառուցման համար	մ^3	9	2,92	26,29
24	50x50x5 մմ, L=2.5 մ, պողպատե անկյունակների ուղղաձիգ տեղադրում հողի մեջ, հողանցման համար	հատ	8	6,32	50,55
25	Պողպատե շերտաձող —50x4, հողանցման համար	գմ	1	1,21	1,21
26	Պողպատե շերտաձող —40x4, խրամուղում, հողանցման համար	գմ	25	0,75	18,70
27	Հողանցման ալյումինե հաղորդալարի անցկացում, 1x120մմ^2 հատվածքով	գմ	15	1,42	21,33
28	Էկզոթերմիկ եռակցում հողանցման համար	կետ	9	0,19	1,75
29	Պոլիէթիլենային խողովակ Ի50 մմ, Հողանցման աղբյուրից մինչև շենք	գմ	12	0,63	7,54
30	ՊՎՔ խողովակի անկյունակ Ի50 մմ	հատ	3	0,10	0,30
31	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x6 մմ^2 /Շենքի գլխավոր էլ. վահանից մինչև ՔՍԳ-ի ավտոմատների տուփ/	գմ	22	1,18	25,94
32	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x2.5 մմ^2 /Խմբեր՝ 1, 2, 3 և կոնտուրներից վարդակների մեջ մտնողները/	գմ	63	0,56	35,53
33	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x1.5 մմ^2 /Խումբ 4, 5/	գմ	57	0,38	21,80
34	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x1.5 մմ2, թափանցիկ պաշտպանիչ պատյանով	գմ	8	0,38	3,06
35	Ճալքավոր ճկուն պլաստիկ խողովակ, Ի20 մմ, մալուխների մոնտաժման համար, մոխրագույն	գմ	200	0,38	75,09
36	Գնված լուսատուների տեղադրում	հատ	12	1,47	17,63

Ընդամենը /հազ. դր./	468,63
Շահույթ 11%	51,55
Ընդամենը /հազ. դր./	520,18

Ա.Ա.Հ.20%	104,04
Ընդամենը /հազ. դր./	624,22

ԾավալաթերթN4 /Լոտ 4/ Անվտանգության համակարգեր

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակ	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	16
1	10-742-1	Ղեկավարման վահանակ, ներառյալ ստեղնաշարային թվային բանալին	հատ	1	86,44	86,44
2	10-743-2	Ծխի դետեկտոր	հատ	2	7,05	14,10
3	8-122-1	Վթարային մարտկոց: Վթարային մարտկոց (7-12 Ա): Մատրիքս մոդել, Պիրոնիքս ֆիրմայի արտադրության կամ տեխնիկապես համարժեք: Մոդուլներ ավելացնելու հնարավորությամբ	հատ	1	10,77	10,77
4	10-743-2	Շարժման դետեկտոր՝ 360 աստիճան տեսանելիության դաշտով	հատ	2	6,23	12,46
5	10-744-5	Ներսի ազդարարիչ	հատ	1	4,45	4,45
6	10-744-5	Դրսի ազդարարիչ	հատ	1	36,95	36,95
7	10-52-1	Մալուխ	գմ	100	0,28	28,42
8	շուկա	Կրակմարիչ, 1000 գրամ, CO2-ով (ներառյալ կախիչները)	հատ	2	5,40	10,80
		Ընդամենը /հազ. դր./				204,38
		Շահույթ 11%				22,48
		Ընդամենը /հազ. դր./				226,86
		Ա.Ա.Հ.20%				45,37172
		Ընդամենը /հազ. դր./				272,23

Ծավալաթերթ N5 /Լոտ 5/ Լուսատուներ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակ	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	Առաստաղից կախովի լուսատու՝ ներկառուցված 36-45Վտ, 4000-6000K, 2700-3600lm LED լամպով, չափը՝ 1200x300x15 մմ, գույնը՝ սպիտակ, նյութը՝ ալյումին+պլաստիկ, IP20: Լույսի ցրելու անկյունը՝ 120 աստիճան: Էներգաարդյունավետության դասը՝ A: Կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով (էլ. հոսանքի փոխարկիչը ներառյալ): Գործարանային արտադրության: առնվազն 2 տարվա երաշխիքով	հատ	8	16,670	133,36
2	Կախովի լուսատու, գույնը՝ սև, տրամագիծը՝ 350 մմ	հատ	3	12,500	37,50
3	Այդ թվում LED bulb լամպ, 4000K, 220-240 Վ, 25 Վտ	հատ	3	1,500	4,50
4	Առաստաղի վերադիր ռելսային լուսատու	կ-տ	1	0,000	0,00

5	Այդ թվում լուսատու, 3000K, գույնը՝ սև, հզորությունը՝ 20 Վտ, տրամագիծը՝ 55 մմ, լուսատուի բարձրությունը՝ 170 մմ, լուսատուի բարձրությունը (ներառյալ տրանսֆորմատորը)՝ 235 մմ, ցրման անկյունը՝ 55՝	հատ	4	18,333	73,33
6	Այդ թվում ռեյլս, չափը՝ 2 մ, գույնը՝ սև	հատ	1	8,333	8,33
7	Այդ թվում հոսանքը փոխանցող դետալ, գույնը՝ սև	հատ	1	0,833	0,83
8	Այդ թվում ռեյլսի մի ծայրին ամրացվող դետալ, գույնը՝ սև	հատ	1	0,167	0,17
9	Այդ թվում մետաղական ճոպան ռեյլսը կախելու համար (ներառում է ամրացման դետալներ և ճոպան)	կ-տ	3	12,500	37,50
10	Տրանսպորտային ծախսեր			5,000	0,00

Ընդամենը /հազ. դր./	295,53
Շահույթ 11%	32,51
Ընդամենը /հազ. դր./	328,03
Ա.Ա.Հ.20%	65,61
Ընդամենը /հազ. դր./	393,64

Ծավալաթերթ N6 Ջեռուցում

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	Գազի կաթսայի արտածման խողովակի մոնտաժում	գմ	1	2,82	2,82
2	Ջեռուցման կաթսա, 24 կՎտ, Turbo	հատ	1	302,35	302,35
3	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էքմ	8,50	0,63	5,36
4	Ջեռուցման մարկոց, 10 սեկցիա: Մեկ WDF-NNDL500 սեկցիայի տեխնիկական բնութագիրը՝ Նյութը՝ ալյումին, գույնը՝ սպիտակ, չափը՝ 560x78x78 մմ, հզորությունը՝ 125 Վտ (ΔT=64.5C), հեղուկի տարողունակությունը՝ 0.25լ, քաշը՝ 0.834 կգ	հատ	3	44,39	133,17
5	Ջեռուցման մարկոց, 4 սեկցիա: Մեկ WDF-NNDL500 սեկցիայի տեխնիկական բնութագիրը՝ Նյութը՝ ալյումին, գույնը՝ սպիտակ, չափը՝ 560x78x78 մմ, հզորությունը՝ 125 Վտ (ΔT=64.5C), հեղուկի տարողունակությունը՝ 0.25լ, քաշը՝ 0.834 կգ	հատ	1	17,76	17,76
6	Պոլիպրոպիլենե (PPR) խողովակ, Ի32 մմ, մոնտաժվում է 2-րդ հարկի պատերի վրա	գմ	56	1,79	100,05
7	Պոլիպրոպիլենե (PPR) խողովակ, Ի20 մմ, մոնտաժվում է 1-ին հարկի ԳԿԹ պատի մեջ և ՔՍԳ-ի հատակի մեջ	գմ	44	1,56	68,67
8	Խողովակաձև ջերմամեկուսիչ պատյան (սպունգ), Ի32	գմ	55	0,17	9,23
9	Խողովակաձև ջերմամեկուսիչ պատյան (սպունգ), Ի20	գմ	43	0,13	5,77
10	Եռաբաշխիկ (PPR) Ի32-ից Ի20 մմ անցումով	հատ	1	0,18	0,18
11	Եռաբաշխիկ (PPR) Ի32-ից Մ1/2" մմ անցումով	հատ	3	0,18	0,55
12	Եռաբաշխիկ (PPR) Ի32 մմ	հատ	2	0,17	0,35
13	Եռաբաշխիկ (PPR) Ի20 մմ-ից Ի1/2" անցումով	հատ	8	0,06	0,45

14	Եռաբաշխիկ (PPR) Ի20մմ	հատ	6	0,06	0,34
15	Անկյունակ (PPR), առանց պարուրի Ի20մմ	հատ	20	0,04	0,76
16	Անկյունակ (PPR), առանց պարուրի Ի1/2"	հատ	16	0,04	0,61
17	Անկյունակ (PPR), պարուրով (մետաղ) Ի1/2"	հատ	8	0,48	3,86
18	Ջրի փական, Ի32 մմ տրամագծով խողովակների համար	հատ	4	5,70	22,80
19	Ջրի խողովակի փական, Ի20 մմ տրամագծով խողովակների համար	հատ	2	2,18	4,35
20	Ջրի խողովակի փական, Ի1/2" մմ տրամագծով խողովակների համար	հատ	1	1,43	1,43
21	Ջրի խողովակի խցափակիչ Ի32մմ	հատ	2	0,07	0,14
22	Ջրի խողովակի խցափակիչ Ի20մմ	հատ	2	0,04	0,07
23	Ջրի զտիչ	հատ	2	0,99	1,99
24	Ջեռուցման մարտկոցի ստորին փական	հատ	4	3,15	12,60
25	Ջեռուցման մարտկոցի վերին փական	հատ	4	3,21	12,85
26	Ջեռուցման մարտկոցի օդահեռացման փական /ավտոմատ/	հատ	4	1,95	7,81
27	Ջեռուցման մարտկոցի բարձակներ	հատ	8	0,47	3,73

Ընդամենը /հազ. դր./	720,06
Շահույթ 11%	79,21
Ընդամենը /հազ. դր./	799,27
Ա.Ա.Հ.20%	159,85
Ընդամենը /հազ. դր./	959,12

«Արմար Գրուպ» ՍՊԸ տնօրեն Ա.Մարտիրոսյան

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272101024
ՀՎՀՀ 06954139

---------- Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արմար Գրուպ» ՍՊԸ
Հասցե Ք. Վանաձոր, Տերյան 6-23
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ
ՀՀ 2471707969620000
ՀՎՀՀ 06954997

---------- Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« » հուլիսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86»
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
« ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N Ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Տաշիր համայնքի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև	**31.08.2019**
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272101024
ՀՎՀՀ 06954139

---------- Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արմար Գրուպ» ՍՊԸ
Հասցե Ք. Վանաձոր, Տերյան 6-23
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ
ՀՀ 2471707969620000
ՀՎՀՀ 06954997

----------Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N
« » հուլիսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86»
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	45261167	Տաշիր համայնքի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման եվ վերանորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	1200000	3000000	6762000	6762000	6762000	6762000	6762000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վազգեն Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272101024
ՀՎՀՀ 06954139

----------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արմար Գրուպ» ՍՊԸ
Հասցե Ք. Վանաձոր, Տերյան 6-23
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ
ՀՀ 2471707969620000
ՀՎՀՀ 06954997

----------Ա. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » հուլիսի 2019թ. կնքված
N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86»
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 7
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86» ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Տաշիր «17» հոկտեմբեր 2019 թ.**

<<Արմար Գրուպ>>ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Արեն Մարտիրոսյանի՝անձ AR 0314309 տրվ. 07.06.2013թ. 018-ի
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

, կողմից որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի*** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-19/86** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /_14_/_09___/2020__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Արմար Գրուպ» ՍՊԸ
ընկերության անվանումը

Ք. Վանաձոր, Տերյան 6-23
ընկերության հասցեն

«Արդշինբանկ»ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 2471707969620000
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 06954997
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Ա.Մարտիրոսյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

16 / Հուլիս / 2019

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[36]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ____ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝
«Արմար Գրուպ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝
«Արդշինբանկ»ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝
Հ/Հ 2471707969620000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06954997

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06954139**

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900272101024**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 676200/վեց հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ ԴՐԱՄ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները՝
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.

[36] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ՝ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.